

3. ԴԻՐ-ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գործածվող գրերը նախամեսոպոլյան շրջանում: Նախամեսոպոլյան գրի և գրականության հարցը դեռևս իր բավարար լուծումը չի գտել հայագիտության մեջ⁵⁷։ Բացառված չէ, որ հին Հայաստանում գոյություն ունեցած լինեն ինքնուրույն նշանագրեր, որոնք գործ են ածվել հայկական մեհյաններում, և այդ նշանագրերի, ինչպես նաև, հավանաբար, արամեական և հունական տառանիշերի օգնությամբ գրվող հայալեզու գրականություն՝ նույն մեհյանների շրջանակներում⁵⁸։

Մինչև մեսոպոլյան գրերի ստեղծումը այդ հնագույն, բայց ըստ երևույթին սահմանափակ կիրառություն ունեցող, նշանագրերի կողքին հայերը առատորեն օգտագործում էին հարեան պետությունների գրերն ու լեզուները։ Աքեմենյան և սելևկյան պետություններից, որոնց հետ Հայաստանը քաղաքական և մշակութային սերտ կապերի մեջ էր գտնվում, հայերը ստացան արամեերեն և հունարեն գրերն ու լեզուները։ Մ. թ. առաջին դարերում Հայաստանում կիրառություն գտան նաև պահլավական և ասորական գրերն ու լեզուները։

Հունարենը և արամեերենը Հայաստանում օգտագործվել են երկար ժամանակ, երբեմն զուգահեռաբար։ Սակայն այդ երկու լեզուների օգտագործման մեջ գոյություն է ունեցել էական տարբերություն։ Թագավորական դիվանի, պետական, վարչական լեզու լինելով հանդերձ, հունարենը հանդիսացել է նաև հասարակության վերնախավի՝ զոռնե նրա մի մասի համար կենդանի, խոսակցական լեզու։ Արամեերենը փոխ է առնվել որպես գրասենյակային լեզու և այդպիսին էլ մնացել մինչև վերջ, երբ տեղի է տվել հայերենին։

Պետական-պաշտոնական, գրասենյակային լեզու։ Օտար լեզուների կիրառության մասին պետական-պաշտոնական բնագավառում երկու կարևոր վկայություններ են պահպանվել հայ մատենագրության մեջ։ Մ. Խորենացին հիշատակում է, որ նախքան հայ գրերի գյուտը, կային պարսից և հունաց գրերը, «որոնցով գրված այժմ գտնվում են մեղ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, գյուղերի ու գավառների, յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի ու դաշինքների, մանավանդ սեփական ազնվականության վերաբերյալ»⁵⁹։

Ղազար Փարպեցու վկայությունը վերաբերում է հայկական գրերի ստեղծման նախօրյակին։ Խոսելով Վռամշապուհ թագավորի արքունիքի և այնտեղ աշխատող դպիրների մասին, պատմիչը նշում է, որ հայոց թագավորների վճիռներն ու հրովարտականքը գրի էին առնվում ասորի և հույն գրով. «վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակացն»⁶⁰։

57 Նախամեսոպոլյան գրերի և գրականության մասին մանրամասն տե՛ս հայ գրերի գյուտին վերաբերող համապատասխան բաժնում (հատ. 2)։

58 Տե՛ս Ա. Գ. Արտանյան, Հայ գրի և գրության պատմություն, Երևան, 1959, գլ. 2, է. Պիվազյան, Նախամեսոպոլյան հայ գրի և գրականության հարցի շուրջը, «Մեսոպոլ Մշակույթ» հոդվածների ժողովածու, Երևան, 1963, էջ 285—324։

59 Խորենացի, Ա., գլ.

60 Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Ա, 10։

Արամեերեն լեզուն աքեմենյան կայսրության պայմաններում հիմնականում գրասենյակային լեզվի դեր էր խաղում⁶¹։ Ավելի քան հավանական է, որ Աքեմենյանների նաև հայկական սատրապության գրասենյակի պաշտոնական լեզուն ևս արամեերենն էր, որը օգտագործվել է Հայկական լեռնաշխարհում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում։ Այդ տեսակետից հատկանշական է Դիոդոր Սիկիլիացու հաղորդումը այն կեղծ նամակի մասին, որը 317 թվականին Երվանդը, Հայաստանի կառավարիչը, իբր թե ուղարկած է եղել Պարսից աշխարհի (Պերսիսի) սատրապ Պեկեստասին։ Նամակին արժանահավատ քննութ տալու համար, պատմիչի վկայությամբ, այն գրվել է «սիրիական տառերով», այսինքն՝ արամեական տառերով⁶²։

Արամեերենը, որպես գրասենյակային լեզու, ժամանակավորապես ետ է մղվում մ. թ. ա. III դարում։ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Արևելքում հունարեն լեզվի տարածման համար։ Հաշվանքար մ. թ. ա. III դարի սկզբից հունարենը պաշտոնական լեզու դարձավ Հայաստանում։ Համենայն դեպս, Արմավիրի արձանագրությունները վկայում են, որ մ. թ. ա. III դարի վերջերին, Երվանդունիների պետական գրասենյակային լեզուն հունարենն էր։ Արձանագրություններից մեկը Արմավիրի քաղաքացիների և նրանց քրմապետ-թագավորի ուղերձն է Երվանդ թագավորին⁶³։ Այն վկայում է, որ հելլենիստական մյուս երկրների նմանությամբ, քաղաքի և թագավորի միջև պաշտոնական նամակագրությունը վարվում էր հունարեն լեզվով⁶⁴։ Մյուս արձանագրությունը, հավանաբար, թագավորական գրասենյակի կողմից սեբեկյան տոմարի մուտքն է վավերացնում Հայաստանում, երրորդը՝ թագավորի անունից գրված, անհայտ տեղից ժամանած ինչ-որ ներկայացուցչին ուղղված ողջույնի տեքստ է, իսկ չորրորդը՝ պետական առաջնահերթ նշանակություն ունեցող իրադարձությունների մասին մի ղեկուցադիր է⁶⁵։ Պետական փաստաթղթերը նախքան հրապարակվելը կազմվում էին գրասենյակում, պապիրուսի կամ մազաղաթի վրա, որից հետո տեքստը փոխադրվում էր քարի վրա։ Այդ նշմարելի է Արմավիրում, քանի որ դատելով պապիրուսային գրության ձևերը հիշեցնող տառանիշերից, արձանագրությունները հանդիսանում էին պապիրուսների վրա գրված տեքստերի փորագրված պատճենները⁶⁶։

⁶¹ Sk'n Handbuch der Orientalistik, W. B. Henning, Mitteliranisch, Leiden, 1958.


⁶² Sk'n Diod., XIX, 23.

⁶³ Արմավիրի արձանագրությունները վկայակոչվում են՝ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (էջ 137—147) աշխատությունից. առաջին արձանագրության տեքստը տե՛ս էջ 134—135.

⁶⁴ C. B. Welles, Royal correspondence in the Hellenistic Period. A Study in Greek Epigraphy, New Haven, 1934.

⁶⁵ Sk'n К. В. Тревер, Очерки по истории..., նաև՝ Ս. Տեր-Հախբյան, Արմավիրի հունարեն երկրորդ արձանագրությունը, Շնյուքեր չին Հայաստանի պատմության մասին, Երևան 1935, А. И. Болтунова, Греческие надписи Армавира, ИАФАН, 1942, 1—2, Ն. Մանандյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946.

⁶⁶ Sk'n А. И. Болтунова, նույն տեղում։ Համեմատիր նաև՝ Б. Д. Граков-ի գրախոսականը Բոլտոնովայի աշխատության մասին, ВДИ, 1946, № 1.



Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկը

Սեանա լճի շրջակայքում, ինչպես նաև Զանգեզուրում հայտնաբերված Արտաշես Ա-ի սահմանաքարերի վրա փորագրված արամեական արձանագրությունները վկայում են, սակայն, որ արամեերենը տակավին պահպանում էր իր կենսունակությունը որպես պետական-վարչական լեզու⁶⁷։ Ծիշտ է այդ տեքստերում հանդիպում են մի շարք լեզվական անհարթություններ, որոնք անհարիր են արամեերեն լեզվի սկզբունքների հետ։ Սակայն այդ անհարթությունները դեռ բավական չեն ժխտելու արձանագրությունների լեզվի արամեական բնույթը։ Այս հանգամանքը վկայում է հայկական սատրապության և նրավանդունի առաջին թագավորների գրասենյակային լեզվի վերակենդանացման մասին։ Այդ միջնորդությամբ Արտաշեսի ժամանակաշրջանից կամուրջ է զրցվում դեպի Աքեմենյանների պետական-պաշտոնական լեզուն և առհասարակ վարչության կազմակերպման ձևերը⁶⁸։ Արամեերենի հետագա ճակատագրի մասին քիչ տվյալներ ունենք։ Մ. Թ. ա. I դարում, երբ Տիգրան Բ-ի և նրա հաջորդների օրոք Հայաստանում հատկապես զարգանում է հելլենիստական մշա-

⁶⁷ Տե՛ս Ա. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2; И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1952, № 2; Գ. Ա. Տիրացյազ, Արտաշես Ա-ի նորոգյալ արձանագրությունը, Տեղ. ՀԳԱՀ, 1957, № 10; А. Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, ИФЖ, 1965, № 4.

⁶⁸ Տե՛ս И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении; Г. А. Тирацян, Ахеменидские традиции в древней Армении, „XXV Международный конгресс востоковедов. Доклады советской делегации“, М., 1960.

կույթը, հնարավոր է, որ արքունիքը նախապատվությունը տված լինի հունարենին՝ որպես սլաշսոնական լեզվի, թեպետ դժվար է կարծել, որ արամեերենը վերացվել է պետական-վարչական բոլոր ոլորտներից:

Արշակունի թագավորի անունից գրված արամեական արձանագրության բեկորը Գառնիից⁶⁹ մի նոր վկայություն է արամեերենի հարատևության մասին պետական գրասենյակում մ. թ. առաջին դարերում, մի հանգամանք, որը հաստատվում է, ինչպես տեսանք, մեր մատենագիրների տվյալներով ևս:

Ինչ վերաբերում է հունարենին, ապա անմիջականորեն արքունական գրասենյակից է ծագում հայ թագավորի նամակը տիգրանակերտցիներին⁷⁰: Այն, ինչպես և Ղազար Փարպեցու վկայությոնը, ցույց է տալիս, որ ընդհուպ մինչև հայ գրերի գյուտը, արամեերենի և ասորերենի կողքին հունարենը հիմնական այն օտար լեզուներից էր, որոնցից օգտվում էին Հայաստանում, արքունական գրասենյակում և ընդհանրապես պետական-պաշտոնական կյանքում:



Գառնիի արամեերեն արձանագրությունը

Հայաստանում գտնված օտարալեզու արձանագրություններ: Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված և հին Հայաստանի պատմությանը անմիջականորեն վերաբերող՝ օտար լեզուներով գրված արձանագրությունների թիվը այնքան էլ մեծ չէ: Մեզ են հասել արամեական ինը արձանագրություններ, որոնցից հինգը միանման տեքստեր են, հունական շուրջ 16 արձանագրություններ և լատինական յոթ արձանագրություն, երեքը նույնպես միանման⁷¹:

Պատմական իրադարձություններով և սոցիալ-տնտեսական հետաքրքիր երևույթներով հարուստ մի երկրում, ինչպիսին Հայաստանն էր, որտեղ ծավալվել էր շինարարական լայն գործունեություն, զարմանալի է թվում վիմագրական նյութերի նմանօրինակ սակավությունը: Սակայն չպետք է մոռանալ այն

⁶⁹ А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, ИФЖ, 1964, № 3.

⁷⁰ Տե՛ս Գ. Խ. Տարգիսյան, Կոնստանդուպոլիս, 1960, էջ 76 և հաջ.:

⁷¹ Հին Հայաստանի օտարալեզու արձանագրությունների մեծ մասը ի մի է բերված Կ. Վ. Տրևերի վերևում հիշատակված աշխատության երկրորդ մասում: Վերջին տարիներում հայտնաբերված արձանագրությունների մասին նախորդ ծանոթագրություններում մեջբերված հրատարակություններից և ուսումնասիրություններից բացի, տե՛ս նաև Բ. Ն. Առաքելյան, լատինական արձանագրություն Արտաշատ մայրաքաղաքից, ՊՖՀ, 1967, № 4:

հանդամանքը, որ արձանագրությունները գտնվել են պատահականորեն և միայն շնչին բացառությամբ է, որ արդյունք են հնագիտական սիստեմատիկ պեղումներին:

Օտար լեզուներով գրված արձանագրությունները մեծ նշանակություն ունեն Հայաստանի մ. թ. ա. III—մ. թ. IV դարերի պատմության և կուլտուրայի ուսումնասիրման համար, եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակաշրջանը լուսաբանող մատենագրական նյութը պակասավոր է: Վիմական արձանագրությունները կարևոր տվյալներ են մատակարարում Հայաստանի քաղաքական սյատմության վերաբերյալ: Օրինակ, Արմավիրի արձանագրությունները պատկերում են մ. թ. ա. III դարի վերջի իրադարձությունները՝ կապված Երվանդ Վերջինի անձի հետ: Խարբերդում, էջմիածնում, Տիգրանակերտում և Արտաշատում գտնված հունական և լատինական արձանագրությունները անդրադարձնում են մ. թ. I—II դարերի Հայաստանի պատմության անցքերը և նշանակություն ունեն հայ-հռոմեական հարաբերությունների ուսումնասիրման համար: Օտար լեզվով գրված արձանագրություններից որոշ տվյալներ կարելի է քաղել սյատմական անցքերի ժամանակագրության համար, իսկ քանի որ հունարեն և արամեերեն արձանագրությունների մեծ մասը թագավորի անունից են փորագրված, հետաքրքիր տեղեկություններ են ստանում հայ թագավորների, հատկապես Արշակունիների տիտղոսների մասին:

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական սյատմության մի քանի հանգուցային հարցեր իրենց արտացոլում են գտել վիմագրական նյութի մեջ: Արմավիրի և Տիգրանակերտի արձանագրությունները հնարավորություն են ստեղծել գիտական հիմքերի վրա դնելու Հայաստանի հելլենիստական տիպի քաղաքի ուսումնասիրման հարցերը և ընդհանրապես փաստելու այդ տիպի քաղաքների սոցիությունը հին Հայաստանում⁷²: Նշված այդ արձանագրություններում, մի դեպքում հիշատակված են Արմավիրի քաղաքային համայնքի լիիրավ քաղաքացիները՝ «արմավիրցիները», իսկ մյուս դեպքում քաղաքային համայնքը (այս անգամ՝ Տիգրանակերտի) բնութագրող սպեցիֆիկ տերմինը՝ պոլիտեյան: Նույն այդ արձանագրությունները անփոխարինելի տվյալներ են հաղորդում քաղաքի ինքնավար դրության մասին պետության կազմում, թագավորի և քաղաքի փոխհարաբերությունների և քաղաքի արտոնությունների ու պարտավորությունների մասին և ակնարկներ են պարունակում քաղաքի ներքին կառուցվածքի մասին:

Ինչպես վերը տեսանք, հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի մի այլ կարևորագույն բնագավառի՝ հողային հարաբերությունների հարցերի հետ են առնչվում Արտաշես Ա-ի արամեական արձանագրությունները, որոնք տեղեկացնում են հողերի բաժանմանը վերաբերող թագավորի միջոցառումների մասին:

Հայտնի են մի քանի շինարարական բնույթ ունեցող արձանագրություններ Գառնիից, Խարբերդից, էջմիածնից, Արտաշատից: Հատկապես մեծ է Տըր-դատ Ա-ի հունարեն արձանագրության արժեքը Գառնիի ամրոցի ճարտարապետական հոյակապ կոթողի՝ պարսպի ուսումնասիրման համար, և վերջերս

⁷² Տե՛ս Գ. Խ. Саркисян, Тигранакерт.

Փոքր Վեդիում գտնված Տրայանոսի 116 թվականի արձանագրության նշանակությունը⁷³,



Սյունիքում գտնված արձանագրության
տառաձևագրությունը

վերջին արձանագրությունը, թեև հաղորդագրություն է մի կոնկրետ դեպքի մասին, բայց շափածո է:

Առաջին ութ տողանոց արձանագրության մեջ հանդիպում են Հեսիոգոսի և նրա եղբոր Պերսեսի անունները. այս տեքստի բնույթը քարոյախոսական է թվում: Բայց անկախ նրա բովանդակության մեկնաբանումից և փորագրման նպատակներից, այն անկասկած մ. թ. ա. VII դարի հույն գրող Հեսիոգոսի «Գործեր և օրեր» երկի հետ առնչվող գրական մի հատված է:

Երկրորդ տասնեակու տողանոց արձանագրությունը ևս բազմիցս արժանացել է մասնագետների ուշադրությանը, բայց նրանից ամբողջական, կապակցված իմաստ կորզել առայժմ չի հաջողվել: Միևնույն ժամանակ, սակայն, երևում է, որ այդ արձանագրության մի քանի տողերը հանդիպում են

Մի շարք արձանագրություններ հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրման աղբյուր են ծառայում: Արմավիրի արձանագրությունները վաղագույն վկայություններից են հայերի ծանոթության մասին հունարեն լեզվի և հույն գրականության հետ նրանք նաև հետաքրքրական տվյալներ են պարունակում Արմավիրում արևի պաշտամունքի և գուցե պատգամախոսությանի գոյության մասին:

Ինչպես տեսնում ենք, հին Հայաստանի վիմագրական նյութը բազմակողմանի նշանակություն ունեցող սկզբնաղբյուր է: Նրա արժեքը մեծանում է, եթե հաշվի առնենք, որ արձանագրությունները, որպես կանոն, ժամանակակից են արտացոլված իրադարձություններին, ուստի և վավերագրերի նշանակություն ունեն:

Հելլենիստական գրականությունը և պատմագրությունը Հայաստանում: Հայտնի է, որ հունական գրականության առաջին նմուշները Հայաստանում հանդիպում են Արմավիրի արձանագրություններում: Առաջին քարի № 1 և 2 արձանագրությունները հատվածներ են գրական երկերից: № 7,

⁷³ Տե՛ս Բ. Ն. Առաֆեյան, լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, էջ 302—311:

Եվրիպիդեսի (մ. թ. ա. 480—406) «Հիպպոլիտոս», «Օրեստես», «Անդրոմեդա» ողբերգություններում, ինչպես նաև նույն Եվրիպիդեսի անհայտ երկերից հատվածներ պարունակող պատառիկներում: Մնացած տողերը հունական դրամաների և ողբերգությունների դեռևս չպարզաբանված երկերից են վերցված. թվում է զուցե նույն Եվրիպիդեսի գործերից⁷⁴:

Ստացված պատկերը յուրյց է տալիս, որ այստեղ տարբեր պիեսներից կատարված, իրար հետ անմիջական կապ չունեցող, քաղվածքներ են ի մի բերված: Այդ դեպքում արձանագրության տեքստը կարելի է դիտել որպես հունական, հիմնականում Եվրիպիդեսի, ողբերգություններից կատարված տարբեր տողերի մի ժողովածու, անթուղգիա, որը կարող էր ուսուցողական նպատակ ունենալ և կիրառվել դպրոցում⁷⁵:

Արմավիրի արձանագրություններից, այսպիսով, երևում է, որ մ. թ. ա. II—II դարերում Հայաստանում արդեն ծանոթ էին հունական գրականության այնպիսի ականավոր դեմքերին, ինչպիսիք Հեսիոդոսն ու Եվրիպիդեսն էին:

Հելլենիստական գրականության զարգացման հաջորդ էտապը Հայաստանում կապված է Տիգրան Բ-ի անվան հետ: Այդ ժամանակվա հելլենիստական առաջավոր պետությունների օրինակով, Տիգրանի արքունիքը հելլենիստական գրականության գնահատողն ու քաջալերողն էր:

Նորաստեղծ մայրաքաղաքում՝ Տիգրանակերտում էր ապաստան դրել հույն հռետոր Ամփիկրատեսը, որը արքունիկ էր Աթենքից ու մերժել Սելևկյանների հրավերը՝ հաստատվելու Անտիոքում: Ամփիկրատեսը հեղինակն էր նշանավոր անձնավորությունների մասին մի երկի, որի մեջ հավանաբար նաև «Տիգրանի վարքը» կար⁷⁶: Տիգրանի արքունիքում էր ապրում նաև հույն փիլիսոփա և հռետոր Մեթրոդորոս Սկեպսիացին, որը տեղափոխվել էր Հայաստան Պոնտոսից: Մեթրոդորոսը, որին Պլուտարքոսը անվանում էր «այր բազմազիտուն», իսկ Պլինիոսը՝ «հռոմեատյաց», գրել էր «Տիգրանի պատմությունը», որը մեզ չի հասել⁷⁷: Կարևոր է և հետաքրքիր այն հանգամանքը, որ հայ վերնախավի մի մասը գոնե, ոչ միայն հասկանում ու գնահատում էր հելլենիստական գրականությունը, այլև իր ներկայացուցիչների ջանքերով մասնակցում այդ գրականության զարգացմանը: Հայտնի է, որ Տիգրանի որդի Արտավազդը (մ. թ. ա. 56—34) գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ: Արտավազդի գրական այս գործերը գոյություն ունեին դեռևս մ. թ. II դարում, հույն պատմագիր Պլուտարքոսի օրոք: Արտավազդի իշխանության տարիներին Արտաշատում թատերական ներկայացումներ էին բեմադրվում, այդ թվում նաև Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» ողբերգությունը:

74 Տե՛ս Ցա. Ի. Սմիռնոփի ղեկուցումը Արմավիրի արձանագրությունների մասին, К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 148—156: Chr. Habicht Über eine armenische Inschrift mit Versen des Euripides, „Hermes. Zeitschrift für klassische Philologie“, 1953, 2, էջ 251—256: J. L. Robert, Bulletin epigraphique, „Revue des études grecques“, LXVII, Janv., 1954, № 255, էջ 179—180:

75 Տե՛ս Chr. Habicht, Über eine armenische Inschrift...:

76 Տե՛ս К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 12:

77 Զ. Մանեղյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, էջ 67: Գ. Խ. Սարգսյան, Նախամետրոպիտան շրջանի պատմագրությունը, ՊՁԶ. 1969, № 1:

Արշակունի թագավորները նույնպես հովանավորում էին հելլենիստական գրականությունը: Մ. թ. II դարում, Սոհեմոս թագավորի արքունիքում, Արտաշատում ապրում էր սիրիացի գրող և հռետոր Յամբլիքոսը: Սա հավանաբար Հայաստանում պոնտիկո ժամանակ գրել է «Բարեկրոնականք» պատմավիպական երկը⁷⁸:

Արշակունիների օրոք փորձ է արվում նաև գրի առնել տեղական ժողովրդական ավանդությունները հայերի պատմության սկզբնական ժամանակաշրջանի մասին: Այդ գործը հանձնարարվում է ասորի պատմագիր և փիլիսոփա Մար Աբաս Կատինային, որը, Մծուռն կամ Մծուրք քաղաքում գրում է Հայաստանի պատմության նախնական շրջանը⁷⁹: Այս աշխատանքից է առատորեն օգտվում Մովսես Խորենացին «Հայոց պատմության» առաջին գիրքը գրելիս:



Արտաշատի լատիներեն արձանագրության սկզբի մասը

Մովսես Խորենացին հետաքրքրական տվյալներ է հաղորդում հին Հայաստանի պատմագրության մի որոշակի ճյուղի, այսպես կոչված «մեհենական պատմությունների» գոյության մասին: Այդ պատմությունները տեղեկություններ էին պարունակում նաև հայոց թագավորների և նրանց գործերի մասին: Խորենացին հիշատակում է մեհենական պատմությունների և այլ գործերի հեղինակ Անիի քուրմ Օղյուսպին, Արտաշեսի մասին գլուխները շարադրելիս⁸⁰:

Խորենացու՝ Բարդաթանի մասին⁸¹ հաղորդած տեղեկություններից կարելի է որոշ հետևություններ անել մեհենական պատմությունների լեզվի մասին: Բարդաթանը, որը մ. թ. II դարի ասորի պատմագիր էր և քարոզիչ, գալիս է Հայաստան և լինում 'Իարանադյաց գավառի Անի ամրոցում, որտեղ ծանոթանում է այնտեղ եղած «Մեհենական պատմության» հետ, որի մեջ տվյալներ կային նաև հայ թագավորների մասին: Ավելացնելով ընթացիկ դեպքերի պատմությունը, նա ամբողջ աշխատանքը թարգմանում է ասորերեն: Քանի որ այդ

78 Տե՛ս Ն. Մանեղյան, Փնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն. Ա, էջ 38, 39:

79 Տե՛ս նույն տեղում, էջ 16:

80 Տե՛ս Փ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, գլուխ 3-րդ: Խորենացի, Բ, ծր:

81 Տե՛ս Խորենացի, Բ, կդ:

գործը հետո թարգմանվել է նաև հունարեն, ապա ուսումնասիրողները ենթադրել են, որ Անիի այդ «Ռեհենական պատմությունը» գրված է եղել հայերեն կամ ուրարտերեն լեզվով: Մինչև այժմ դեռևս պարզ չէ, սակայն, թե ինչ գրեր են օգտագործվել այդ պատմությունները շարագրելիս: Հայտնի են նշանագրեր, որոնք պայմանական ձևով «մեհենական» են կոչվում⁸², թեպետ նրանց կիրառման մասին փաստեր չկան: Ոմանց կարծիքով այդ նշանագրերը նախնուդարյան-համայնական ժամանակաշրջանի պիկտոգրամաներ կամ պետրոգլիֆներ են⁸³, թանի որ այս նշանագրերը դեռ վերծանված չեն, դժվար է ուղղակի որևէ բան ասել նրանց մասին: Ինչ վերաբերում է Հայաստանի մեհենական պատմություններին, ապա նրանք կարող էին գրված լինել, եթե այդ նպատակի համար չեն օգտագործվել հայկական ինչ-որ նախնական տառանիշներ, հունական կամ ավելի հավանական է, արամեական տառերով:

4. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թատրոնի դերը հեղինակալի ժամանակաշրջանում: Հեղինակալի շրջանի մշակույթի կարևորագույն և առավել զարգացած բնագավառներից մեկըն էր թատրոնը, որից անմասն չէր մնացել նաև Հայաստանը: Պլուտարքոսից մեղ հայտնի են Տիգրանակերտում թատրոնի կազմակերպման և Արտաշատում թատերական ներկայացումների բեմադրման փաստերը⁸⁴, Այդ փաստերը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է որոշ պատկերացում կազմել դասական և հելլենիստական շրջանի թատրոնի գեղարվեստական բարձր արժեքից բացի, նաև նրա հասարակական-քաղաքական դերի մասին:

Հունական թատրոնի բնորոշ գծերից էին նրա պաշտամունքային ծագումը, որը իր դրոշմն էր թողել բեմադրություն ձևերի վրա, և սոցիալական ու քաղաքական այն կարևոր նշանակությունը, որ նա ուներ քաղաքային համայնքի կյանքում: Թատրոնը իշխող դասակարգի խոսափողն էր, որի միջոցով նա իր գաղափարախոսությունն էր քարոզում քաղաք-պետության բնակչությանը: Զի կարելի պատկերացնել որևէ հունական քաղաք չառանց սեփական թատրոնի: Թատրոնը քաղաքի նույնպիսի անբաժանելի մասն էր կազմում, որպիսիք էին նրա տաճարները: Թատրոնին տրվում էր պետական նշանակություն. ներկայացումների կազմակերպումը հանձնարարվում էր բարձրագույն պաշտոնյաների և ամհնապատվալոր քաղաքացիներին: Թատրոն հաճախելու համար պետությունը հատուկ նպաստ էր ընձեռում քաղաքացիներին:

Հեղինակալի շրջանում թեև շատ բան փոխվեց և առավել շեշտվեց թատրոնի ժամանցային հանգամանքը, բայց և այնպես այն չկորցրեց իր սոցիալական ու քաղաքական դերը, որի կարիքը մեծապես շարունակում էր զգալ տիրող դասակարգը: Արևելքում հիմնադրված բոլոր քաղաքներն ունեին իրենց

82 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն» (ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար), ատաշին լաս, Երևան, 1956, էջ 84:

83 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 19:

84 Հեղինակալի շրջանի հայկական թատրոնի մասին մանրամասն տե՛ս Գ. Գոյն, 2006 թ. «Հեղինակալի շրջանի հայկական թատրոնի մասին» I. Театр древней Армении, М., 1952, էջ 79—174: